ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 մայիսի 2023 թվականի N 52-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ (ԱՐՏԱԳՆԱ) ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 12- ի հերթական (արտագնա) նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքին պատկանող հողամասերը աճուրդով օտարելու մասին,

2. Փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն սահմանելու մասին,

3. Մեծավանի «Կամ Մար» զարգացման կենտրոնին անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին,

4. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնահովիտի Սարգիս Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը դրամական միջոցներ տրամադրելու մասին,

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 25-ի N 20-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին,

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին,

7. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող Հայաստանի Հանրապետության համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով Հայաստանի Հանրապետության համայնքներում Միացյալ ազգերի կազմակերպության կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ԱՆԱԽԱՍՅԱՆ

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա.ՄՈՎՍԻՍՅԱՆ

Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

Ջ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023 մայիսի 12
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 մայիսի 2023 թվականի N 53-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 3-րդ կետով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանարպետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասը օտարել աճուրդով և սահմանել մեկնարկային գինը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -11
Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Ա. ՊՈՂՈՍՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ

Դեմ -0

Ձեռնպահ -3
Վ. ԱՆԱԽԱՍՅԱՆ
Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023 մայիսի 12
ք. Տաշիր

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
2023թվականի մայիսի 12 -ի 53- Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասը աճուրդով օտարելու մեկնարկային գինը ու պայմանները

Հ/հ	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի ծածկագիրը	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը	Հողամասի չափը (քմ)	Որակական հատկանիշներ	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ)
1	Տաշիր համայնք, ք, Տաշիր, Վան զանգված , 5-րդ փողոց, թիվ 2	06-008-0015-0001	Բնակվայրերի	Այլ	1585,1		Չկա	1255500
	Տաշիր համայնք, ք, Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 207/1	06-008-0206-0064	Բնակվայրերի	Այլ	138,95		Չկա	110500

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն . ՍՈԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 մայիսի 2023 թվականի N 54-Ա

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով և 8-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքապետարան դիմած քաղաքացիների դիմումները՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր Գետափնյա փողոց, թիվ 29 հասցեի բնակիչ Անդրանիկ Միքայելի Մխոյանին (ՀՎՀՀ՝ 900275081025, ՀԾՀ՝ 3008790022) ազատել Տաշիր համայնքում հաշվառված Մերսեդես Բենց Ց 180 ((Mercedes Benz C 180) մակնիշի, 19MA909 պետհամարնիշի ավտոմեքենայի 19350 (տասնինը հազար երեք հարյուր հիսուն) դրամ գույքահարկից:

2. Փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնությունների մասով փոխադրամիջոցների գույքահարկ վճարողների փոխարեն համայնքի բյուջեից կատարել վճարում:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ԱՆԱԽԱՍՅԱՆ
Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա.ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆ
Ջ.ՊՈՂՈՍՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023 մայիսի 12
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2023 թվականի N 55-Ա

ՄԵԾԱՎԱՆԻ «ԿԱՄ ՄԱՐ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և «Կամ Մար» զարգացման կենտրոնի տնօրեն Ալլա Անախասյանի դիմումը (մուտք՝ 02.05.2023-ի ՔԴ 474)

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Տաշիր համայնքին սեփականության իրավունքով պատկանող, ՀՀ լոռու մարզ Տաշիր համայնք, գ.Մեծավան, Գայի փողոց, թիվ 14 հասցեում գտնվող, «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան գյուղի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի 3 սենյակը անհատույց օգտագործման իրավունքով, 1 տարի ժամկետով տրամադրել «Կամ Մար» զարգացման կենտրոնին, որի դիմաց կենտրոնի տնօրենությունը պարտավորվում է կատարել սենյակների կոսմետիկ վերանորոգում :

2. Համայնքի ղեկավարին՝ «Կամ Մար» զարգացման կենտրոնի տնօրեն Ալլա Անախասյանի հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ԱՆԱԽԱՍՅԱՆ
Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Ա. ՊՈՂՈՍՅԱՆ
Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2023 թվականի N 56-Ա

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՀՈՎԻՏԻ ՍԱՐԳԻՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնահովիտի Սարգիս Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Լուսե Քալաշյանի դիմումը (մուտք՝ 11.04.2023-ի ՔԴ-400)

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. « Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնահովիտի Սարգիս Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել 50000 (հիսուն հազար) դրամ ֆինանսական աջակցություն՝ Լեռնահովիտ գյուղում «Ապուրի» փառատոն կազմակերպելու նպատակով:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ԱՆԱԽԱՍՅԱՆ
Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Ա. ՊՈՂՈՍՅԱՆ
Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023 մայիսի 12
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 մայիսի 2023 թվականի N 57-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N 20-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով , «Նորմատիվ իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները եվ դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» N 20-Ա որոշումը:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ԱՆԱԽԱՍՅԱՆ
Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Ա. ՊՈՂՈՍՅԱՆ
Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023 մայիսի 12
ք. Տաշիր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Տաշիր համայնքի ավագանու
2023 թվականի մայիսի 12-ի N57-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում են Տաշիր համայնքի (այսուհետ՝ համայնքի) կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը:
2. Համայնքի կամավոր խնդիրները ուղղակիորեն պայմանավորված չեն համայնքային կյանքի բնականոն ընթացքի հետ: Դրանք կարող են իրականացվել միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
3. Յուրաքանչյուր տարի կամավոր խնդիրների իրականացման համար համայնքի բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների չափը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 10%-ը:
4. Այն դեպքում, երբ կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի ղեկավարի կողմից սեփական լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:
5. Համայնքի կամավոր խնդիրներ են սահմանվում՝
1) կացության դժվարին պայմաններում հայտնված, համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցությունը.
2) պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների բարձր առաջադիմությամբ ուսանողների ուսման վարձի մասնակի հատկացումը
3) համայնքի հանրակրթական դպրոցների գործունեության աջակցումը.
4) համայնքի բնակիչ հանդիսացող, ծառայության ընթացքում զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների անապահով ընտանիքներին աջակցությունը:
5)համայնքի բնակիչ հանդիսացող, պատերազմական իրավիճակում ռազմական գործողությունների ընթացքում վիրավորում ստացած ազատամարտիկներին աջակցությունը
6)տարերային և տեխնածին վտանգով պայմանավորված աղետների ու տնտեսական ցնցումների դեպքում բնակչությանն անհետաձգելի օգնության տրամադրումը
6. Որպես համայնքի կամավոր այլ խնդիր ավագանու կողմից սահմանելու համար առաջարկություն կարող են ներկայացնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

7. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի սահմանումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կամավոր խնդրի սահմանման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով դրա նպատակը, իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

8. Այն դեպքում, երբ կամավոր խնդրի սահմանելու առաջարկությունը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, ապա վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցիչըհամայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր խնդրի սահմանման վերաբերյալ դիմում՝ նշելով դրա նպատակը և անհրաժեշտության հիմնավորումը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

9.Սույն կարգի 5-րդ կետում սահմանված կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի ղեկավարի սեփական լիազորություններն են՝

1)ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին՝ ավագանու սահմանած չափորոշիչներին համապատասխան, համայնքի ղեկավարին կից սոցիալական աջակցության մշտական հանձնաժողով.

2) սոցիալական աջակցության մշտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, սույն կարգով սահմանված դրույթներին համապատասխան, որոշում է կայացնում սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ.

3)սահմանված կարգով ընթացք է տալիս սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված նախաձեռնություններին:

10.Սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կամավոր խնդիրների լուծման նպատակով համայնքի ղեկավարի որոշմամբ սոցիալական աջակցությունը տրամադրվում է մինչև 40 000 (քառասուն հազար) դրամի չափով, 5-րդ կետի 6-րդ ենթակետերով՝ 100.000 (հարյուր հազար) դրամի չափով

11.Բացառիկ դեպքերում՝ արտակարգ կամ չնախատեսված իրավիճակների առաջացմամբ, առողջական և սոցիալական խնդիրներով պայմանավորված, սոցիալական աջակցության մշտական հանձնաժողովի հատուկ եզրակացության հիման վրա՝ նախագահի ներկայացմամբ, ավագանու որոշմամբ կարող է տրամադրվել մինչև 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամի չափով աջակցություն:

12 .Սոցիալապես անապահով ընտանիքների՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն և (կամ) միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ոչ պետական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան մեկ անգամ՝ ուսման վարձի 50%-ի չափով

13. Ուսման վարձի հատկացում չի արվում համայնքի ղեկավարի, ավագանու անդամի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց հետ մերձավոր

ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր), եթե նրանք վարում են համատեղ տնտեսություն:

14.Դրամական աջակցություն ցուցաբերելու դեպքում գումարը տրամադրվում է անկանխիկ՝ բանկային համապատասխան հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

15. Սոցիալական աջակցություն կարող է տրամադրվել նաև ոչ դրամական ձևով:

16. Մեկ բյուջետային տարվա ընթացքում միևնույն անձը (ընտանիքը) սոցիալական աջակցությունից կարող է օգտվել առավելագույնը 2 անգամ, , որի չափը չի կարող գերազանցել սոցիալական օգնության առավելագույն չափի 1,5-պատիկը:

17. Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց և նրանց ընտանիքի անդամներին, Տաշիր համայնքի բնակիչ չհանդիսացող քաղաքացիներին :

18. Համայնքի ավագանու կողմից սույն կարգով չկարգավորված կամավոր խնդիրների լուծումների իրականացումը սահմանվում եմ միայն միայն ավագանու որոշմամբ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ն. ՍՈԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 մայիսի 2023 թվականի N 58-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի հունիսի 23-ը, ժամը՝ 14:30-ին:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Վ. ԱՆԱԽԱՍՅԱՆ
Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Ա. ՊՈՂՈՍՅԱՆ
Ջ՝ ՊՈՂՈՍՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023 մայիսի 12
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 մայիսի 2023 թվականի N 59-Ա

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2030 ՕՐԱԿԱՐԳԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով , 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթներով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի մասնակցությանը «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ Հայաստանի Հանրապետության համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով Հայաստանի Հանրապետության համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին:

2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2023 թվականի բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:

Կողմ -11	Դեմ -0	Ձեռնպահ -3
Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ		Վ. ԱՆԱԽԱՍՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ		Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ
Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ		Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ		
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ		
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ		

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Ա. ՊՈՂՈՍՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023 մայիսի 12
ք. Տաշիր